ԿԱՐԱՊԵՏ ԵԶՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՅԱՆԻՆ

Ստորև որոշ կրճատումներով հրապարակում ենք հայագետ Կարապետ Եզյանի (1835—1905) նամակները Կ. Պոլսի պատրիարքի փոխանորդ, բանաստեղծ և բանասեր Հովհաննես Մկրյանին (1831—1909)։ Դրանք արծարծում են Մկրտիչ Խրիմյանի կաթողիկոս ընտրվելու հետ կապված մի շարք հարցեր, ինչպես նաև ղպալի տեղեկություններ են պարունակում անցյալ դարավերջի հայ հասարակական կյանքի մասին։ Նամակներում որոշակի դրսևորում են գտել հեղինակի ազգային-պահպանողական մտածելակերպն ու հայացքները։ Խնդրո առարկա նամակները պահվում են Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում (Թորոս Ազատյանի ֆոնդ, բաժին XXII, № 2233—2237, 2242, 2251)։

ՎԱՐԱԶԴԱՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԱՐՏԱՇԵՍ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

1

12/24 հունիսի, 1892
autiche Bad Castun

Արժանապատիվ հայր.

Հիվանդությունիցս կատարելապես բուժվելու համար, բժիշկների խորհրդով, ահա մի ամիս է, որ կթափառիմ տար աշխարհում՝ մի ամսի չափ Carlsbad-*ում ջուրեր կխմեի, իսկ այժմ այստեղ եմ իբրև թե լեռնային օդը ծծելով և բաղանիք ընդունելով պիտի կազդուրվեմ. տեսնինք, ինչ Աստված, բայց հուսով եմ՝ նորա ողորմածությամբը, հուլիսի 10-ին կվերադառնամ բնակավայրս՝ Պետերբուրգ։ Այս թափառական կենցաղս արգելք եղավ ինձ մինչ ցարդ պատասխանել ապրիլի 21-ի գրած Ձեր պատասխան նամակին։ Դեռ Պետերբուրդ էի, երբ հասան ինձ սուրբ Էջմիածնից ավետաբեր հեռագիրներ Խրիմյան սրբազանի միաձայն ընտրության մասին Աթոռ հայրապետության Հայաստանյաց եկեղեցվո. երկար տարիներից հետո վիճակվեցավ սրբազանին իրավամբ կոչել Ամենայն Հայոց Կաթողիկոս. այդ կոչումը յուր բնական նշանակությունը ստացավ։ Զարմանալի է մեր բանը. մենք միշտ ի վնաս մեզ ենք գործում, բայց նախախնամության մատը կա, որ մեզ առաջնորդում է մեր կամքի հակառակ։*

1828—30 թթ. պարսկական պատերազմից հետո ռուս տերությունը գրեթե 20 տարի շարունակ յուր ամենայն ճիգ... կթափեր, որպեսզի տաճկաստանցի հայեր ճանաչին Մայր աթոռի իրավասությունը. ազգի առաջնորդք և մեծամեծք պարագլուխ ունենալով ժամանակի պատրիարքներ, ընդդիմանում էին մինչև Մատթեոս սրբազանի պատրիարքությունը, որ լոկ իբրև սկզբունք ընդունեց այդ իրավասությունը։ Անցան տարիներ. Ներսես կաթողիկոսի մահից հետո նույն տերությունը այդ կապը ավելի ամրացնելու համար առաջարկեց, որ կաթողիկոսը Տաճկաստանի բարձրաստիճան եկեղեցականներից ընտրված լինի (այդ միտքը կպատկաներ մի ազգասեր և հեռատես հայի՝ բժիշկ Գևորգ Ախվերդյանցին[2], նորա շնորհիվ և ազդեցությամբ սեփականեց և գործադրեց տերությունը) ազգը անտարբեր էր և գրեթե առանց նորա գիտության, տաճկահայերին Մատթեոսից[3] ազատելու համար ընտրվեցավ նա կաթողիկոս. Գևորգ կաթողիկոսի[4] ընտրությունը, սահմանադրականի լինելու պատճառով, ուրիշ կերպ էր, բայց, այնուամենայնիվ, նա ընտրվեցավ միայն պոլսեցիներից կամ իսկապես Պոլսո ժողովրդի այն անվստահելի անհատների ձայներով, որոնց ըստ մեծի մասին ընդհանուր ժողովը կկազմին։ Բայց ընտրության այդ եղա-

նակները վտանգալից էին, նոքա կարող էին խաղալիք դարձնել Մայր աթոռը, ընդհանուր ժողովի ձեռքով դժվար չէր որևէ տերության համար հարկ եղած ժամանակը ուղած անձը ընտրել տալ, շատերի համար մտատանջության նյութ էր դարձել այդ հարցը. ահա այդ միջոցին և տերությունը պահանջեց, որ Տաճկաստանի բոլոր վիճակները (Հայաստանը) յուրյանց հոգևորական և աշխարհական պատգամավորներով Իշման տաճարի մեջ մասնակցեն Ամենայն Հայոց հայրապետի ընտրության. պոլսեցիքը ընդդիմացան որովհետև նոցա համար Հայաստան չկա, այլ կա միայն Պոլիս կամ որ նույն է աղդ չկա, բայց կան միայն առանց հոգի, առանց հայրենիքի հայ դավանություն ունեցող անհատներ, հրեաների նման։ Փառք աստծու, օտարի ուժով մենք ձեռք բերինք մեր կորսված իրավունքը, այսուհետև պետք է պինդ բռնինք։ Տաճկաստանցի ազգայինքը արդարև մեծ գործ կատարեցին և մեծ ծառայություն մատուցեցին։ Նոքա իրենց նիրկայությամբ քանդեցին լարված որոգայթը, ապարդյուն կացուցեցին նենգ ու պատիր միջոցները։ Բայց մի միտք ինձ կդբաղեցնե, թե յուրյանց ձայնը Հայրիկին տալով արդյոք նոքա ի նկատի ունեին նորա ուժը բառնալ այդ ծանր լուծը, նորա կարողությունը վարել եկեղեցվո նավը այդ մրրկալից ժամանակը, թե կամեին միայն սփոփել այդ պատվական մարդու վրշտացած նիրտը և ազատել նորան աքսորանքից[5]։ Ձեզ ավելի հայտնի կլինի, իսկ մեզ վերջը ցույց կտա։ Ինչևիցե, բայց նոր կաթողիկոսի վիճակը շատ ծանր կլինի էջմիածնա մեջ, շրջապատված չարակամ և կեղծավոր խորհրդակիցներով և ինքը անտեղյակ հանգամանքներին, տիրող օրենքներին և կարգ ու կանոններին։ Որդիական անկեղծությամբ գրեցի Ձեզ, շնորհակալ կլինեմ, եթե սխալ մտածմունքս ուղղեք Ձեր նամակով։ Համենայն դեպս ազգը երախտապարտ պետք է լինի սրբազան պատրիարքին և նորա այդ ծառայությունը անմոռանալի դրոշմված կմնա պատմության մեջ։

Արդեն քանի ամիս անցած է, ինչ որ ուղարկել էի պատրիարքարան Սանասարյան վարժարանի կանոնադրությունը ի գործադրություն, բայց մինչ ցարդ ոչ մի լուր, ոչ մի պատասխան չունիմ, այնինչ գործը կարևոր է և պետք է օր առաջ տեղական հոգաբարձություն կազմել և ապա մտածել, թե՞ անշարժ կայք գնելու մասին և թե տոկոսաբեր թղթեր զետեղելու, որովհետև երեք տարուց հետո կտակի իրավասությունը կկորցնենք, նաև մահ կարող է պատահել և գործը կիսակատար կմնա. ուրեմն գործենք, քանի որ ժամանակս ի ձեռս մեր է. կաղաչեմ Ձեզ, արժանապատիվ հայր, թախանձանք խնդրել մեր պատվական և վսեմապատիվ բարեկամին Գաբրիել էֆ. Նորատունկյանին[6], որ դարկ տա այդ գործին և նվիրե նորան իր խոհեմ ու բարձր ուշադրությունը, ընդսմին հայտնել նորան և իր պատկառելի ամուսնուն խոնարհ մեծարանքս. եթե բարվոք նա դատե խնդրեմ խոսակցեք և սրբազան պատրիարքի հետ, որպեսզի այդ ազգանվեր հաստատությունը իր վերջնական կազմակերպությունը ստանա և կանոնավոր ընթացքը ունենա։ Խնդրեմ ներփակյալ նամակը հանձնել ըստ պատկանելույն։

Խորին անկեղծությամբ մնամ Ձեր աղոթից ապաստան

Կար. Եզյան

2

3 փետրվարի, 1893
Պ. Բուրդ

Արժանապատիվ հայր

Ձեր պատասխան գրությունը դեկտեմ. 19-են գրած անկորուստ ստացա. սույն գրությամբ սրբազան պատրիարքի հանձնարարությամբ կխնդրեի երեք հետևյալ հարցմանաց պատասխան տալ խորհրդաբար.

ա. կա՞ մի վտանգ բեկանելու եղած ընտրությունը,

բ. ի՞նչ միջոց պետք է գործ դնեն երկուց աշխարհաց ժողովուրդք, որ չլինի այդ մեծ անպատեհությունն,

և գ. ի՞նչ պետք է անել, որ հայրապետի ուղևորությունն այլևս չհապաղե։

Այդ կարևոր հարցերի ըստ կարելույն հեշտ պատասխան տալու համար հարկ համարեցի պաշտոնական աղբյուրներե տեղեկություն ժողովել, թե՛ այստեղ, թե ի Պոլիս, այսու պատճառով պատասխանն հապաղեցավ. կհուսամ, թե սրբազան պատրիարքը և դուք, արժանապատիվ հայր, ներողամիտ կլինեք։ Ինչպես Ձեզ հայտնի է, կայսր[1] վավերացրեց ընտրությունը, կայսերական հրովարտակը պատրաստ է արդեն օգոստոս ամսից և առհասարակ պաշտոնական շրջանների մեջ մեծ համակրությամբ կվերաբերվին նորընտիր կաթողիկոսին։ Արգելք և դժվարությունք առաջ կգան Բ դռնեն. սուլթանը, ինչպես ինձ դեսպանատունեն[2] կգրեն, երկյուղ կկրե արձակել Խրիմյան հայրիկին, և այլ և այլ «չարամիտ» խոչընդոտներ առաջ կբերե, բայց վերջապես ստիպված կլինի խոնարհիլ պահանջման առջև։—Ահա իրաց այժմյան վիճակը, ուստի կարելի է մակաբերել, թե ընտրության բեկանելու վտանգը չկա։ Թե սինոդն, թե ս. Էջմիածնի և թե մասնավոր անհատներ քանիցս դիմած են տեղվույս կառավարության, միշտ պատասխանը նույն է, թե կայսր վավերացրեց ընտրությունը, թե սուլթանը դժվարությունք կհանե և թե կհուսացվի, որ շուտ ի բարին կվերջանա։ Մեր թույլ ուժերով որչափ հնարավոր է կաշխատենք։ Մի քանի օր առաջ գրեցի դեսպանության ազդեցիկ պաշտոնյայի մեկին ընդարձակ նամակ, ուր բացատրեցի այդ հապաղման վնասը թե՛ ներկա, և թե ապագա ռուսաց քաղաքականության համար, մանավանդ որ սուլթանը Բեռլինի դաշնագրության[3] հիման վրա իրավունք էլ չունի միջամտել քրիստոնյա իր հպատակների այդպիսի կրոնական խնդիրների մեջ։ Եթե այլևս անելու բան ունենք՝ հրամայեցեք՝ ահավասիկ կանք։ Կարծեմ Տաճկաստանի հայերը ևս պետք է մի քիչ շարժեն և իրենց կողմից ճնշում անեն։ Տիրասիրությունը և հպատակությունը լավ հատկություններ են, բայց ինչպես ամեն բան, յուրյանց չափ և սահմանը պետք է ունենան. պետք է հիշեցնել, թե հայոց ազգը իսպառ մեռյալ չէ, դիակ չէ և թե կան նորա համար սուրբ բաներ, որոնց ձեռնամերձ լինիլ կարելի չէ, ազգը պահապան կանգնած է։ Ի՞նչ և ինչպե՞ս պետք է անել կարող չեմ ասել. այդ տեղական հանգամանքներից կախում ունի, բայց մի բան անել պետք է։ Կարծեմ օգտավետ կլինի հարաբերությանց մեջ մտնել ռ[ուսաց] դեսպանատան հետ և համերաշխ գործել, քանի որ նպատակը մի է։

Այլևս խոնարհաբար կխնդրեմ Ձեզ իմ կողմանե աղաչել պատրիարքին իր հայրագութ ուշադրությունը շնորհիլ Սանասարյան վարժարանին։ Ըստ Սանասարյան կտակիս եթե մահվանից 5 տարվա ընթացքում անշարժ կալվածք չգնվի հանուն վարժարանի, դրամագլուխը պետք է մնա ընդմիշտ տոկոսաբեր թղթերի մեջ (հոդ. 7 դ.), որ բնավ ցանկալի չէ։ Այնինչ մինչև ցայսօր խնամակալությունը դեռ քայլ արած չունի այդ իրավունքը տերությունից ստանալու, թեև շուտով Սանասարյանի մահից հետո երեք տարի կլրանա, գոնե ինձ հայտնի չէ, նաև չգիտեմ, թե վարժարանի կանոնադրության 24 հոդ. համաձայն խնամակալությունը նիստեր ունենում է արդյո՞ք, գոնե հոկտեմբերի 3-ի գրած նամակիս դեռ պատասխան չունիմ... Սրբազան պատրիարքը շատ բարիք արած է վարժարանին, թող ամբողջացնե յուր այդ գործ՝ հանուն վարժարանի կալված գնելու իրավունքը ձեռ բերելով։ Խնդրում եմ սիրալիր և կրոտալի ողջույն հայտնել Գաբրիել էֆ. և նորա պատվարժան ամուսնուն։ Ցավ ի սիրտ պետք է խոստովանիմ, թե մոռացել է ինձ և երկտողիվ անգամ չի մխիթարում. հոգ չէ, կհամբերենք և կշարունակենք նույն սերը տածել, բայց գոնե անտես չանե Ս. վարժարանը և իր կարող ուժերով նպաստե ապահովել նորան բարեկարգ վարչությամբ և բարվոք տնօրինությամբ նորա դրամական միջոցներին։

Մնամ արժանապատիվ հայր, Ձեր աղոթից ապաստան խոնարհ որդի
Կար. Եզյան

3

29 մարտի, 1893
Պ. Բուրգ

Արժանապատիվ հայր.

...Ձեր պատվական գրությունը փետրվարի 14-են գրած ստանալուց հետո, անմիջապես գնացի արտաքին գործոց նախարարին և թե՛ խոսքով, և թե առանձին տեղեկագրով բացատրել աշխատեցի կաթողիկոսական խնդրի կարևորությունը, և թե այդ խնդրո այժմյան վիճակը, որ աստիճան տխուր և վհատեցուցիչ տպավորություն կգործե ոչ միայն Տաճկաստանի հայերի վրա, այլև ամբողջ քրիստոնյաների վրա և կնսեմացնե ո[ուսաց] կառավարության տգդեցությունը և պատվո հարգը։ Նախարարը պատասխանեց, թե նա միանգամայն նույն կարևորություն և նշանակություն է տալիս այդ ինդրո, բայց սուլթանը Խրիմյան սրբազան կնկատե իբրև յուր անձնական թշնամի, և ամեն կերպ դիմադրություն կանե, բայց մենք, ասաց, դարձյալ կպնդենք։ Ասացի լսել եմ, թե սուլթանը կայսեր պիտի գրե, ինչպես դուք հաղորդած էիք, պատասխանեց, թե կայսերը այդպիսի գիր չի ընդունիլ և խոստացավ ներկայացրած տեղեկագիրն դեսպանին ուղարկել. կարծեմ սրբազան պատրիարքը կարող էր ստեպ-ստեպ դեսպանի անդուլ ուշադրությունը հրավիրել այդ խնդրո վրա, իսկ մյուս կողմանե իբրև ազգի գլուխ և տերության շահերին նախանձախընդիր, տերության աչքը բացել և բացատրել, թե ամեն տեղ տիրող բռնությունք՝ բանտարկություններ, խուզարկություններ, ճնշումներ, աղքատություն և վերջապես սով անտանելի են դարձնում ժողովրդի վիճակը և ամեն վայրկյան անսպասելի կերպով կարող են նոր քաղաքական դժվարություններ առաջ բերել։ Կաթողիկոսական խնդիրն ևս, որ ոչ սակավ կվիրավորե կրոնական ժողովրդի սիրտը, մեծապես կնպաստե այդ հուզման։ Իհարկե ապստամբական հուզմունք բնավ ցանկալի չեն, բայց հնազանդությունը և տիրասիրությունը յուր չափ և սահմանը պետք է ունենա։ Միշտ տեղի տալ և երբեք չբողոքել, նորանոր բռնություններին առիթ կարող է տալ։ Շատ վտանգալից են ներկայանում ինձ նոր տնօրինությունքը դպրոցների մասին. մանավանդ ինչի՞ Մաարիֆը ավագ երեցների հետ պետք է բանակցի, այլ ազգի առաջնորդների. եթե դպրոցներն էլ կործանեն, ուր ապաստանենք։ Փառք աստծո, սրբազան պատրիարքը ամենայն ձիրքերով օժտված է. ազգի և իր ապագան աչքի առաջ ունենալով պետք է գործի անվեհեր. հուսահատվելու իրավունք չկա։

Ձեր ձեռքով ուղարկված ծրարը կպարունակեր իր մեջ գրքերի ցուցակ, բայց նամակ մեջը չկար և մինչև այժմ էլ Գաբրիել էֆ. Նորատունկյանից նամակ չեմ ստացել։ Կարծեմ նորա վերադառնալու ժամանակը մոտեցել է, խընդրեմ նորան հարգանց ողջույն մատուցանել։ Ուրախ եմ, որ Խրիմյանցի հանձնաժողովը[1] վերահաստատվել է իր պաշտոնի մեջ։ Նորայրին[2] նշանակած 1000 ֆր. մասին սպասեցեք որևէ տնօրինություն անել, մինչև որ կգրեմ այդ մասին։

Սրբազան պատրիարքի աչքը ակնածությամբ կհամբուրեմ և կմաղթեմ, որ Աստված պարգևե նորան երկար և արթուն հովություն և կարողություն առաջնորդել իր ժողովուրդը դեպ ի բարին։

Մնամ արժանապատիվ հայր. Ձեր աղոթից ապաստան. Կար. Եղյան

4

19 մայիսի, 1893
Պ. Բուրգ

Արժանապատիվ հայր.

Օրաթերթերի մեջ տպած հեռագիրը ավետեց մեզ, թե սուլթանը հարկադրվեցավ վերջապես զիջանիլ և յուր հոժարությունը հայտնիլ նորընտիր կաթողիկոսի գալուն և յուր աթոռի վրա բազմելուն, միայն առանց հանդիսավոր ընդունելության։ Պաշտոնական աղբյուրներից տեղեկացա, որ այդ ճիշտ է և թե հրատարակելուց առաջ պետք է որոշվին նորան դիմավորության և այլ հանգամանքները, ապա պիտի հրատարակվի։ Ես կուզեի հեռագրով շնորհա-

վորել կաթողիկոսին, բայց խորհուրդ տվին սպասել մինչև բանագնացությանց վերջը։ Ուրեմն փառք աստուծո, որ այդպես վերջացավ, բայց ըստ իս դեռ բոլոր վտանգները չվերացան, որովհետև եթե սուլթանը և տաճկաց կառավարությունը այդպես պիտի վերաբերի դեպի Ամենայն Հայոց կաթողիկոսը և գրեթե չպետք է նորան ճանաչե, ապա ուրեմն նա ինչպե՞ս պետք է յուր իրավասությունը գործ դնե նորա տերության սահմանների մեջ։ Արդյոք այդ իրողության մեջ չկա պատճառ կամ առիթ երկյուղ կրելու, թե այսպիսով պիտի նվազե, թուլանա, գուցե իսպառ վերանա Տաճկաստանի հայոց կապը Մայր աթոռի հետ, որը մեծամեծ չարիք կարող է բերել մեր եկեղեցուն։ Մենք հրճվում էինք, ուրախանում էինք, որ Տաճկաստանի հայերը մասնակցեցին ընտրության, ուրախանում էինք, որ այսպիսով այդ կապը պետք է ամրապնդվի և մեր ազգը մի հոտ և մի հովիվ պիտի լինի և նորընտիր հայրապետը երկար տարիներից հետո իրավամբ Ամենայն Հայոց կաթողիկոս կոչվելուն իրավունք պիտի ունենա, բայց աստված մի արասցե, որ այդ առաջինը վերջինը լինի, ուստի պետք է մտածել և առաջն առնել։ Մի՞թե Պոլսո հայերը և նորանց հոգևորականությունը այն աստիճան... ստրկության են հասել, որ պիտի չպատվին յուրյանց կաթողիկոսին։ Մի՞թե դրա համար հրաման է հարկավոր և մի՞թե այդպիսի արգելող հրամանը կարելի է կատարել և վերջապես, եթե չկատարեն և փառավոր ընդունելություն անեն որպես միշտ ընդունել են, տերությունը ի՞նչ պետք է անե, քանի որ միայն յուրյանց կաթողիկոսին են պատիվ տալիս. դա զգացմունքի արտահայտություն է, դորանով նրանք տերության դեմ չեն գնում։ Իմ կարծիքով պետք է ամենափառավոր կերպով ընդունին, թող տաճկի և այլ տերությունք տեսնեն և իմանան, թե հայերը ջերմեռանդ են դեպի յուրյանց եկեղեցին, թե նոքա պատվում պաշտում են յուրյանց հայրապետին. այդ մեր ուժն է. թող իմանան, որ այդպիսի հրամաններ տալ կարելի չէ, որ նորանք չեն կատարվիլ։ Այդ մի ընդդիմություն կլինի, բայց որի համար պատժել կարելի չէ և որը ամենի աչքում իրավացի է։ Նաև ես կարծում եմ, որ գալուց հետո կաթողիկոսը պետք է պատրիարքի կամ դեսպանի միջոցով կամ մի այլ կերպ պահանջե, որ սուլթանը նորան ընդունե, նա պետք է ընդունե ոչ թե Խրիմյանին, այլ կաթողիկոսին և ընդունելության ժամանակ անվեհեր և բացարձակ հայտնե սուլթանին, թե հայը միշտ հնազանդ կմնա կառավարության և հավատարիմ, եթե ձեռնամերձ չլինին նորա եկեղեցուն, դպրոցներին և բարեպաշտ հաստատություններին, իսկ եթե եկեղեցուն և այդ հաստատությանց, որոնց միշտ հարգել են սուլթանի նախորդները, պետք է ձեռնամերձ լինին, այն ժամանակ նա կբողոքե, բացարձակ կդիմադրե...։ Իբրև կրոնավոր նա սուլթանի առաջ սուտ խոսել չէ կարող և անկեղծորեն կհայտնե յուր կարծիքը։ Ես համոզված եմ, որ այդ տեսակ խոսքերը կարող են տպավորություն գործել։ Զիջանել և տեղի տալ, նշանակում է իր պատիվը չճանաչել և պահանջները խստացնել։

Կաթողիկոսի վիճակը ոչ միայն Պոլսում, այլև Էջմիածնա մեջ ծանր կլինի իրեն անծանոթ պայմանների և մարդկանց մեջ, ուստի ցանկալի է, որ նորան մի բանիբուն և խոհական եկեղեցական ուղեկցեր. ես խորհուրդ կտայի նմանապես, որ Էջմիածին հրավիրե Պետրոս Սիմոնյանցին[1] և Նահապետ վարդապետին[2], որոնք հանգամանքներին հմուտ և խոհեմ անձինք են։

Էջմիածնա սինոդը ինձ թույլ չտվեց մահարձան կանգնեցնել Սանասարյանի շիրիմի վերա գմբեթաձև, այդ մերժումը խիստ տնոտի պատճառներով էր, ես չկամեցա նորանց հետ այդ մասին բանակցել և թողի մինչև կաթողիկոսի գալը, ուստի, երբ որ կաթողիկոսը Թիֆլիս հասնե, կտակակատար պ. Գ. Եվանգուլյանը[3] իմ աղերսագիրս կներկայացնե արձանի պատկերով հանդերձ վեհափառին. հուսով եմ, որ նա անմիջապես կտնօրինե։

Զեղնից չունիմ իմ վերջին նամակիս պատասխանը։ Ես Զեզ խնդրել էի հայտնել, թե ինչպես պետք է հասկանալ դպրոցների նկատմամբ եղած տնօրինությունը և ինչպես եղավ, որ պատրիարքը հանձնառու եղավ հնազանդել այդ օրենքին։ Իմ կարծիքով զիջողությունը և հնազանդությունը եկեղեցու ցանկի առաջ պիտի կանգ առնին. մեր նախնիքը մեզ այդպես են ավանդել և այդ

ավանդը պահպանել են հանգուցյալ Գևորգ[4] և Մակար[5] կաթողիկոսները, այդ թող ամենքը իմանան։

Կհուսամ, որ շնորհ կանեք ինձ պատասխանելու։ Չգիտեմ արդյո՞ք վերադարձել է Եվրոպայեն մեր բարեկամը[6] և ողջառողջ է, գիտեմ միայն, որ մեզ խպառ մտքից հանել է և երկտողիվ անգամ մխիթարել չէ ցանկանում. իր բանն է։

Ձեր աղոթից ապաստան, խոնարհ որդի՝ Կար. Եղյան

5

25 հունիսի, 1893
Ս. Պ. Բուրգ

Արժանապատիվ հայր.

Ստացա Ձեր հունիս 8/20 գրած նամակը, որին և շտապում եմ պատասխանել։

Որքան Բարձրագույն դուռը վեհափառ կաթողիկոսի հպատակությունից ազատելու գործը ձգձգեց, այնուամենայնիվ, խիստ ուրախալի է, որ վերջապես ցանկալի վախճանով պսակվեցավ մեր ամենիս իղձը։ Ինչ վերաբերում է վեհափառ հայրապետի էջմիածին ուղևորվելուն, որ փոխանակ Կ. Պոլսի, այժմ Տրիեստի վրայով պիտի անցնե, այդ զարմանալի փոփոխություն չէ, քանի որ սուլթանը հավատացած պիտի լիներ, որ որքան էլ ույժ ու բռնություն գործ դներ արգելելու հայ ժողովրդին իր հարգանաց ցույցը անելու սիրած հայրապետին, այնուամենայնիվ զգացմունքի հուրը պիտի բռնկեր, առ ժամանակ մոռցընել տար կրոնասեր ու հնազանդ ժողովրդին տերության ահ ու սարսափը և նորանք պատշաճավոր ընդունելությամբ իրենց որդիական հարգանքը պիտ մատուցանեին։ Հենց այս նախազգացումն է եղել սուլթանի զգաստացման գլխավոր պատճառը։

Դուք գրում եք, որ թերևս սուլթանը չթույլատրե եկեղեցիներում նորընտիր հայրապետի անունը հիշել և նորա կոնդակը կարդալ։ Մի՞թե կարելի է մինչ այդ աստիճան համբերել։ Հայրապետի անունը եկեղեցիներում հիշելը մեզ համար մի օրենք է, որը անխախտ կատարվել է դարեր շարունակ և նվիրագործվել է, նույնպես և կոնդակ կարդալը։

Երբ աստուծով վեհափառ կաթողիկոսը կժամանե ս. էջմիածին և կստացվի սինոդի հրամանը, այն ժամանակ անմիջապես պետք է հիշել հայրապետի անունը ս. պատարագի ժամանակ առանց թույլտվություն խնդրելու։ Ես փորձառությունից գիտեմ, որ շատ անգամ ոչ միայն Տաճկաստանում, այլև այլուր, երբ որ մի բան առանց թույլատվության է կատարվում, առանց նկատողության և արգելքի անցնում է, այնինչ եթե հրամանի կամ թույլտվության դիմեն՝ դժվարություններ և նույնիսկ արգելք առաջ կուգան, իսկ այդ արգելքը մեծ և անբուժելի հարված կտա մեր եկեղեցական միության և Մայր աթոռի իրավանց։ Դուցե հարկ կա նախապես բանակցել ռուսաց դեսպանի հետ, որովհետև էջմիածնի ռուսաց սահմանը անցնելուց հետո, ռուսաց տերությունը շարունակ, երեսուն թվականներից սկսած մինչև հիսնական թվականները 20 տարվա ընթացքում ամենայն ճիգ թափեց էջմիածնի աթոռի այդ իրավունքը ընդունել տալու[1]. հետևաբար չպետք է հոժարի թույլ տալ կամ կորցնել այդ իրավունքը։ Իսկ եթե կամենաք թույլտվություն խնդրել, հենց դորանով կտուռավարությանը առիթ կտաք կասկածելու և արգելելու։

Սուլթանը ազատելով իր հպատակությունից վեհափառ կաթողիկոսին՝ կամա թե ակամա ընդունել է նորա օրինավոր պաշտոնական ընտրությունը, ապա ուրեմն, եթե նա իբրև կաթողիկոս թույլ է տվել Խրիմյանին, լռելյայն ընդունել է և այն ամենը, որոնք անմիջապես կապ ունին կաթողիկոսի անվան հետ։ Մի խոսքով, իմ խորհուրդ է հայրապետի կոնդակը ստանալուն պես պատշաճավոր շուքով և ծնկաչոք կարդալ եկեղեցիներում և հիշել անունը պատարագի ժամանակ։

Առայժմ ոչ մի խորհուրդ չունիմ տալու, քանի որ դեռևս վեհափառ հայրապետին հարկավոր է ամենից առաջ ծանոթանալ վանքի ներքին և արտաքին գործոց դրության հետ, ուստի և լավ կլիներ, եթե Թիֆլիզ հասնելուն պես իրեն մոտեցներ Արգար Հովհաննիսյանին[2] և Գևորգ Եվանգուլյանին, առանց նորանց հակառակորդներին լսելու, իսկ էջմիածին հասնելով հրավիրեր յուր մոտ Պետրոս Սիմոնյանցին և Նահապետ աբեղա Նահապետյանցին, որոնք իրենց ուշիմ խորհուրդներով օգտակար կլինին վեհափառի ձեռնարկելիք գործերի մեջ։

Կարապետ Կոստանյանը[3] կհանդիպե վեհափառին Օդեսայում կամ Վիեննայում. նա էջմիածնա և Թիֆլիզի ազգային գործերի վիճակի հետ ծանոթ է և արժանի է ուշադրության։

Ես հեռագրով շնորհավորեցի վեհափառին, մատուցանելով իմ որդիական հարգանքս։

Երբ վեհափառը Թիֆլիզ հասնե, կմատուցվի նորան արքայական հրովարտակը և ճակատի ադամանդյա խաչը, որը գնված է և շատ սիրուն է. կմատուցվի նույնպես և ս. Ալեքսանդր Նևսկու շքանշանը։

Ներփակյալ ուղարկում եմ Մատթեոս Ղամազյանի իմ գրած կենսագրությունը, որին Պոլսում շատ ճանաչողներ կան հին մարդիկներից։

Ձեր աղոթից ապաստան. Կար. Եղյան

6

25 մայիսի, 1894
Ս. Պ. Բուրգ

Արժանապատիվ հայր.

Ստացա Ձեր մարտ 17 թվով գրած նամակը։ Ստացել եմ և մեր բարեկամի նամակներն, որոնց մի քանի օր առաջ պատասխանեցի։

Իմ ներկա խորհրդածությանց առարկան վարժարանի համար անշարժ կայքերի գնման խնդիրն է, որի հաջողությունից կախում ունի վարժարանի ապագա բարօրությունը, ուստի և մեր բարեկամի նամակի մեջ կրկին այդ խնդրո մասին եմ խոսել, որովհետև երկյուղ կկրեմ, թե միգուցե կտակով որոշած ժամանակամիջոցը գլորի և մենք ոչինչ չկարողանանք անել։

Կխնդրեմ Ձեզ սրբազան պատրիարքի առանձին ուշադրությունը հրավիրել այդ գործի վերա և իմ խնդիրս մատուցանել, որ շուտափույթ և առանց հապաղման ամեն միջոց գործ դնեն կալված գնելու կայսերական իրադ* ստանալու հաջողության համար։ Այս մասին առանձին նամակով խնդրել եմ և Սիմեոն Պեյ Մաքսուդյանին։

Կխնդրեմ ևս սրբազան պատրիարքին, որ Սանասարյան վարժարանի տեղեկագիրը անհապաղ տպագրվի և տարածվի, որը հուսալի է, կփարատե շարամիտ մարդկանց տարածած լուրերը և ախորժ տպավորություն կգործե։

Որչափ ցավ կպատճառե ինձ ոմանց անխոհեմ երիտասարդների վարմունքը, որոնք ավելի կդժվարեցնին ազգի վիճակը և թշնամիների փոխարեն այնպիսի անձանց վերա կհարձակվին, որոնք իրենց կյանքը նույն ազգի համար են մաշում։

Հուսամ ստացած կլինեք Գյուտ քահանայի նոր աշխատությունը (Սիմեոն Կաթողիկոսի հիշատակարանը)[1], հույս ունիմ, որ Ձեր արժանավոր ուշադրությունը չեք խնայիլ, որ թե այդ և թե Ալեքսանդր Երիցյանի «էջմիածնի վերջին կաթողիկոսները»[2] աշխատությունը մրցանակի արժանի դատվին։ Այս երկու աշխատությունն էլ ըստ իմ կարծյաց մեծ կարևորություն ունին և քաջալերանաց արժանի են, քանի որ առաջին օրինակներն են նույնանման օգտավետ ուսումնասիրության ասպարեզում։ Երանի, որ Պոլսո պատրիարքարանի դիվա-

* Հրամանագիր։

նի մեջ գտնված արձանագրությունները ևս մշակվին և հրատարակվին, մինչ անհետացած չեն։

Ձեր աղոթից ապաստան, խոնարհ որդի.
Կար. Եղյան

7

27 նոյեմբերի, 1895
Պ. Բուրդ

Արժանապատիվ հայր.

Ձեր նոյեմբեր 11/23 թվով պատվական նամակը անկորուստ ստացա և ցավ և մրմունջ ի սիրտ կարդացի Տաճկաստանի այլ և այլ քաղաքներում եղած հայոց թշվառ զավակների կոտորածների եղկելի մանրամասնությունները։

Ուր Երեմիա կամ Ներսես Շնորհալի, որ ողբան զկործանումն հայոց ազգի, որ թեև հին դարերից իսկ շատ սովոր է «լալյաց բանին», բայց այս անգ'ոմվա ջարդը և սրածությունքն պետք է ավելի սոսկալի համարել, քան թե այն, զորս կողբան մեր պատմաբանքը, զի դժբախտաբար մարդկությունը մեծ առաջադիմություն է արել կոտորելու զենքեր պատրաստելու մեջ...

Որչափ զոհ գնացին կոտորածների, գուցե կրկնակի թվով ավելի զոհ կերթան սովի և այլ պատահարներին, որովհետև կենդանի մնացածները տուն չունին, ապրուստ չունին, հաց չունին։ Պետք է ջանալ, որքան հնարավոր է նյութական օգնությամբ փրկել թշվառներին սովալլուկ մահից, այլապես ցուրտ ձմեռը ավելի կնպաստե նոցա կոտորվելուն։

Ես ամենին խորհուրդ եմ տալիս իրանց նպաստները ուղղել պատրիարքարան, փոխանակ հանձնելու այլևայլ ժողովարարներին, որոնք շատացել են։ Այդպես, եղբայրք ժամհարյանները[1] ուղարկեցին 20000 ֆր., նույնպես և այլք։ Կցանկամ իմանալ այդ մասին ունեցած Ձեր կարծիքը, որպեսզի ըստ այնմ գործեմ։ Մանավանդ ինձ համար կարևոր է այդ, ի նկատի ունենալով Ձեր նամակի վերջին տողերը, ուր կգրեք, թե ուրիշ անգամվան կթողնուք ս. պատրիարքի «հեռատես գործունեությունն» և «ազգի հույսերն արդարացրեց» պարբերությանց մասին։ Կխնդրեմ մտերմաբար ինձ հաղորդել Ձեր հայացքները այդ մասին։

Ձեր նամակից կտեղեկանամ, որ Սանասարյանի կտակի գործադրության տեղեկագիրը հասած է պատվելի խնամակալության անդամոց ձեռքը, իսկ ես կաղաչեմ պատվելի խնամակալությունեն կամ մեր բարեկամեն տեղեկություն, թե ինչ եղանակով հնարավոր է Արևելքի[2], թե պատրիարքարանի միջոցով այդ տեղեկագիրը տարածել զավառների մեջ։ Այդ նպատակի համար պատրաստ ունիմ հազար օրինակ, որ կարող եմ հասցնել ըստ պատկանելույն՝ տեղուդ ռուսաց հնագիտական ճեմարանի միջնորդությամբ։

Չիմանալով, թե ի՞նչ հասցեով կարելի է անկորուստ նամակ հասցնել Երուսաղեմի օգնական փոխանորդ հորը[3], ներփակյալ ուղարկում եմ և խնդրում եմ դեպ եղած ժամանակ հանձնեք նորան։

Խնդրել էի մեր պատվական բարեկամից վարժարանի տպած տեղեկագրի[4] մի քանի օրինակներ ուղարկել տալու՝ բարեկամացս բաժանելու համար. հուսամ, որ կպատվիրե ուղարկել. խնդրեմ խոնարհ ծառայությունս նորան մատուցանելու։

Մաղթելով Ձեզ առողջություն, մնամ Ձեր աղոթից ապաստան, խոնարհ որդի՝ Կար. Եղյան։

Ո՞վ է Արևելքի մեջ Մագիստրոս անունով գրողը. Լամբր[ոնացու] մասին ես միանգամայն համաձայն եմ նորան, և Լամբր[ոնացու] մասին կարծիքս բացատրել եմ Դարդելի Հառաջաբանի[5] մեջ։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1

1 Նկատի ունի Ներսես Ե. Աշտարակեցի կաթողիկոսին (1843—1857)։

2 Գևորգ Ախվերդյան (1818—1861)—հայ բանաստեղծ, բժիշկ։

3 Խոսքը Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսի (1858—1865) մասին է։

4 Նկատի ունի Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսին (1866—1882)։

5 Թուրքական արքունիքը Մկրտիչ Խրիմյանին աքսորել էր Երուսաղեմ՝ նրան մեղադրելով հայկական շարժումներին ակտիվորեն մասնակցելու մեջ։

6 Դարբինել Նորատունկյան (1859—1936)—պետական և հասարակական գործիչ, Թուրքիայի արտաքին գործերի և հանրային շինարարության մինիստր, հայկական բարեգործական մասնաճյուղի նախագահ (Կ. Պոլիս). պաշտոնաթող լինելով հաստատվել է Փարիզում։ Այնուհետև ակտիվորեն մասնակցել է ֆրանսահայ գաղութի հասարակական և մշակութային կյանքին։

2

1 Նկատի ունի Ալեքսանդր III կայսրին (1881—1894)։

2 Խոսքը Կ. Պոլսի ռուսական դեսպանության մասին է։

3 Նկատի ունի Բեռլինի 1878 թ. դաշնագրությունը։

4 Մկրտիչ Սանասարյան (1818—1890)—հայ մեծահարուստ, որը Կ. Եղյանի խորհրդով 1886 թ. իր ամբողջ կարողությունը կտակել էր հայ հասարակությանը։ Կտակի գործադրության համաձայն մշակվում է հատուկ կանոնադրություն։ Մ. Սանասարյանի միջոցներով հիմնադրվում են Կարինի Սանասարյան վարժարանը, Խառակոնիս գյուղի Մարիամյան օրիորդաց դպրոցը, նպաստներ են տրվում գրողների, խմբագիրների, ուսանողների, առանձին դպրոցների, գրադարանների, գրքերի տպագրության և այլն։

3

1 Մեծահարուստ Հ. Իզմիրյանի կտակի գործադրության նպատակով Կ. Պոլսում ստեղծվել էր հանձնաժողով, որը հիշյալ կտակի միջոցներով հայագիտական աշխատությունների մրցանակաբաշխություններ էր սահմանում։ Այդ հանձնաժողովը որոշ ժամանակ ղեկավարում էր Մ. Խրիմյանը։

2 Նկատի ունի նշանավոր հայագետ Նորայր Բյուզանդացուն (1845—1915)։ Նա մրցանակ է ստացել Կորյունի մասին գրած աշխատության համար։

4

1 Պետրոս Սիմոնյանց (1830—1911)—հրապարակախոս, մանկավարժ, խմբագրել է «Մեղու Հայաստանի» պարբերականը (1863—1886)։

2 Նահապետ վարդապետ Նահապետյան—Էջմիածնի միաբանության անդամ, Գևորգյան ճեմարանի ուսուցիչ։

3 Գևորգ Եվանգուլյան—իրավաբան, հասարակական և մշակութային գործիչ։ Եղել է նաև Թիֆլիսի քաղաքագլուխը։

4 Նկատի ունի Գևորգ Դ կաթողիկոսին։

5 Խոսքը Մակար Ա (1882—1891) կաթողիկոսի մասին է։

6 Նկատի ունի Գաբրիել Նորատունկյանին։

5

1 Ըստ սահմանված կարգի, ընտրված կաթողիկոսը պետք է Էջմիածին ժամաներ առանց ռուսական կառավարության կողմից հարուցված որևէ արգելքի։

2 Աբգար Հովհաննիսյան (1849—1904)—հրապարակախոս, տնտեսագետ, հասարակական գործիչ, խմբագրել է «Փարա» և «Արծագանք» պարբերականները։

3 Կարապետ Կոստանյան (1849—1920)—հայագետ, մանկավարժ, եղել է Էջմիածնի Գևորգյան և Մոսկվայի Լազարյան ճեմարանների տեսուչ, գրել է մի շարք աշխատություններ։

6

1 «Դիվան հայոց պատմության, Սիմեոն կաթողիկոսի Հիշատակարանը», հրատարակեց Գյուտ Աղանյանց, Ա. քահ., մասն 1—3, Թիֆլիս, 1894—1913։

2 «Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում», աշխատասիրեց Ալեքսանդր Երիցյան, մասն Ա, Բ, Թիֆլիս, 1894, 1895։

7

1 Նկատի ունի Մոսկվայարնակ մեծահարուստ ժամհարյան եղբայրներին։

2 Խոսքը Կ. Պոլսում հրատարակվող «Արևելք» օրաթերթի (1884—1912) մասին է։

3 Նկատի ունի Սահակ եպիսկոպոս Խափայանին։

4 Խոսքը Սանասարյան վարժարանի հաշվետվության մասին է։

5 «Հովանու Դարդելի ժամանակագրություն հայոց», առաջաբան Կ. Եզյանի, Պետերբուրգ, 1891։